



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

11 ԱՊՐԻԼԻ, 2018 թ.  
№ 5 (1022)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին երկշաբաթաբեր շաբաթական 53-րդ տարի

ԽՈՉՔՏՈՒՐ ԿՐՈՎՅԱԿԱՆ ԿՆՎԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԵՎԿԱՐԹՎԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԼԵՏՈՆԱԹԵՐԹ


## Միջազգային համաօրծակցության նոր պայմանափոխեր



Մանկավարժական համալսարանի և եվրոպական լավագույն բուհերից մեկի՝ Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի միջև կնքվեց միջազգային համագործակցության 7 պայմանագիր: Մանկավարժական համալսարանը դեռևս 2016 թվականից համագործակցում է Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ: Պայմանագրերի շրջանակում նախատեսվում է 2018-19 թթ. համար «Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիր ներդնել կրկնակի դիպլոմի շնորհմամբ: Երկու բուհերի կողմից տրվող դիպլոմները փոխարժեքաբար ճանաչելի կլինեն երկու երկրներում:

Պայմանագրերից մեկը ենթադրում է նաև ամբիոնի հիմնադրում: Դեռևս 2016 թվականին Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում բացվել է Հայագիտական ամբիոն, որը 2017 թվականին վերանվանվել է Հարավարևելյան եվրոպական/տարածաշրջանային պատմության ուսումնասիրության ամբիոն: Ամբիոնը շարունակում է միջազգային ճանաչում ստացած հայագիտական հետազոտությունները, որոնք իրականացվում են կաթոլիկ համալսարանում 2007 թվականից: Դրանք միտված են պահպանելու երկկողմանի հարյուրամյա հարաբերությունները և նպաստելու այդ հարաբերությունների գիտական ներկայացմանը: Ամ- > 2

Մանկավարժական համալսարանի WISDOM գիտական պարբերականն ընդգրկվել է Scopus գիտաչափական շտեմարանում: WISDOM-ն ընդգրկված է նաև ՀՀ ԲՈՂ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական ժողովածուների ցանկում: Այն գրանցված է 15 Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY (ՂԹԾ), EBSCO, CYBERLENINKA, CROSSREF, PHILPAPERS, WORLDCAT Google Scholar միջազգային գիտաչափական շտեմարաններում:



## WISDOM գիտական պարբերականն ընդգրկվել է Scopus գիտաչափական շտեմարանում

Շտեմարանում ընդգրկվելու գործընթացը նախաձեռնվել էր դեռ նախորդ տարի և ըստ Scopus-ի կանոնակարգի՝ այն անցել է գնահատման 6 փուլ: Ամսագրի խմբագրական խորհրդի 23 անդամներից 13-ը արտասահմանցի, 10-ը՝ հայաստանցի փիլիսոփաներ են: Գիտական հնչեղություն, միջազգային ոլորտում մասնագիտական մեծ լսարան, հոդվածների բովանդակության և ամսագրի նպատակների ու պրոբլեմների շրջանակների համապատասխանություն: այս և այլ որակական ցուցանիշների կողքին Scopus գիտաչափական շտեմարանի փորձագետներն իբրև հանդեսի արժանիքներ առանձնացրել են նաև դրա հստակ նպատակներն ու եզակի թեմատիկան:

Ակադեմիկոս Գեորգ Բրուսյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, WISDOM-ի գլխավոր խմբագիր Հասմիկ Հովհաննիսյանը նշեց. «Սա համալսարանի և մեր երկրի համար աննախադեպ իրադարձություն է և մեծ ձեռքբերում է: Վերջինը հավելեց նաև, որ ամսագիրը պահպանել է ակադեմիկոս Գ.Բրուսյանի գիտահրատարակչական գործունեության ոճը և իր ստեղծման օրից կարևորել է երիտասարդ գիտնականների աճը ապահովող հարթակ դառնալու միտումը՝ իրականացնելով մագիստրոսների, ասպիրանտների հոդվածների հրատարակությունը հանդեսի «Երիտասարդ գիտնականի ամբիոն» բաժնում: Հասմիկ Հովհաննիսյանը հավելեց նաև, որ այսքանով չեն սահմանափակվում, քանզի դեռևս անելիքներ շատ կան, իսկ նման հաջողություններն ավելի են պարտավորեցնում:

Ի դեպ, բանակցությունների փուլում է նաև միջազգային գիտաչափական DOAJ՝ Բաց հասանելիությամբ ամսագրերի տեղեկատու-կատալոգ շտեմարանին անդամակցելու գործընթացը: Վերջինս ինդեքսավորում և հասանելի է դարձնում բարձր որակավորում ունեցող, բաց հասանելիությամբ գրախոսվող գիտական ամսագրերը:

## Մի լուսավոր աշխարհ է մայրս...

Մայրության և գեղեցկության տոնի առթիվ գեղեցիկ միջոցառում էր կազմակերպել Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցը: Յա դասարանի աշակերտները՝ դասվար Աննա Գրիգորյանի գլխավորությամբ, ամոռանալի դարձրին գարնանային այս գեղեցիկ տոնը:

Առանձնահատուկ մեծարանքի արժանացրին մայրությունն ու մայրության հարատևող գեղեցկությունը որպես կյանքի ու երջանկության անսպառ աղբյուր: «7-րդ հրաշալիքն է մայրս, մի լուսավոր աշխարհ է մայրս, մայրս նշխարի է, աշխարհի մայրեր, եղե՞ք երջանիկ, որ ողջ աշխարհում խաղող կյանք լինի», - այսպիսի խոսքերով էլ երեխաները շնորհավորեցին իրենց մայրերին:

Դարոցականները ևս մեկ անգամ հաստատեցին, որ մեր ազգային նկարագիրը ձևավորող անկյունաքարերից մեկը եղել է միշտ կլիմի հայ ընտանիքներում մոր հանդեպ տածած անսահման սերն ու նվիրվածությամբ: > 2



Մեր զրուցակիցն է կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ, «Հատուն կայուն մարդկային զարգացման» առցիսային նախագահ, ՀՀ նախագահին սուրբաբեր Հալալի խորհրդի անդամ Կարինե ԴԱՆԻԵԼՅԱՆԸ:

«Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում, որովհետև ամբողջ կյանքում զբաղվել եմ սիրած գործով: Կարծում եմ նվիրումը երջանկության հիմքն է», -ասում է Կարինե ԴԱՆԻԵԼՅԱՆԸ:

- Տիկին Դանիելյան, կներկայացնե՞ք Հայաստանի էկոլոգիական վիճակը. կարելի՞ է այն համարել ճգնաժամային...

- Խոսել միայն Հայաստանի մասին այսօր, այնքան էլ կոռեկտ չի լինի, որովհետև համաշխարհային այնպիսի գործընթաց է տեղի ունենում, որ ակնհայտորեն ամբողջ մոլորակը և մարդկությունը էկոլոգիական ճգնաժամի մեջ են: Աշխարհի ամենահայտնի գիտնականներն առաջին անգամ 1971 թվականին դիմեցին ՄԱԿ-ին՝ բարձրաձայնելով համաշխարհային էկոլոգիական ճգնաժամի ձևավորման մասին, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն: Առաջին հավաքը ՄԱԿ-ի մակարդակով եղել է Ստոկհոլմում: 1972թ.-ին հարցը քննարկվել է այնտեղ, ստեղծվել է հատուկ հանձնաժողով Լոբովեգիայի վարչապետի ղեկավարությամբ, ուսումնասիրվել է իրավիճակը մոլորակի վրա և տպագրվել է հետաքրքիր գիրք-գեկոյց՝ «Մեր ընդհանուր պագան», որտեղ փաստվել է՝ այո, մոլորակը և ամբողջ աշխարհի մարդկությունը էկոլոգիական ճգնաժամի մեջ են՝ պետք է ծրագրեր մշակվեն > 4



Մեր փոխարեն խոսում են մեր աշխատակիցները...

## Լուսանկարչությունը կյանք է

Տեղի ունեցավ «Իմ սեր, իմ Հայաստան» խորագրով լուսանկարչական ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ներկայացված էր ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի դոցենտ Սամվել Սևադայի և 2-րդ կուրսի ուսանողների 60 աշխատանք: Ցուցադրվող աշխատանքներն ընտրվել էին մի քանի հարյուր աշխատանքներից: Ցուցահանդեսը նվիրված էր ՄԱԿ-ի 2030 զարգացման օրակարգի ուղեմիջոցներին՝ Կայուն զարգացման նպատակներին:

ՀՊՄՀ օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի դոցենտ, ՀՀ վաստակավոր գործիչ Սամվել Սևադան կարևորեց ուսանողներին > 6